ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/72

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով քաղաքացի Դավիթ Թովմասյանի կողմից 18.05.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>Քաղաքացի Դավիթ Թովմասյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Քաղաքացի Դավիթ Թովմասյանը (այսուհետ՝ նաև բողոքաբեր) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 18.05.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն իր կարիքների համար ս.թ. մարտի 21-ին հայտարարել է ՀՀ պաշտպանության նախարարությունում կահույքի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման ընթացակարգ և հայտերի բացման օր է սահմանվել 03.04.2018թ.:

Պատվիրատուն նշել է, որ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում գրասենյակային գույքի կամ կահույքի կամ զինվորական կամ հոսպիտալային

մահճակալների նորոգման ծառայությունների կատարված լինելը, իսկ հաղթող ճանաչված «Սեմանգ» ՍՊԸ-ի ներկայացրած նախկինում կատարված պայմանագիրը մետաղական դետալների պատրաստման աշխատանքների կատարման պայմանագիր է:

Այդ պատճառով գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը, քանի որ հայտով ներկայացրած պայմանագիրը չի համարվում նմանատիպ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» մրցույթի համար:

Գտնում ենք, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, ըստ որի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ չեղյալ համարել «Սեմանգ» ՍՊԸ-ին թիվ 3 արձանագրությամբ առաջին տեղ ճանաչված լինելու որոշումը և չեղյալ համարել թիվ 4 արձանագրությամբ «Սեմանգ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը և կասեցնել 2018թ. մայիսի 2-ի թիվ 1.3 որոշմամբ «Սեմանգ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը»:

Բողոքաբերը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին ժամանակացույցի մասին, սակայն չի ներկայացել նիստերին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Քաղաքացի Դավիթ Թովմասյանը կողմից 18.05.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 24.05.2018թ. թիվ ԴՎԱ/1862 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ըստ բողոքաբերի՝ «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «մետաղական դետալների պատրաստման աշխատանքների կատարման պայմանագիր», որը չի կարող համարվել նմանատիպ, այնինչ, «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «ծառայությունների մատուցման պայմանագիր», որով նախատեսված են աթոռների և սեղանների համար

պահանջվող երկաթի ծռելու և զոդելու ծառայություններ, որոնք էլ իրենց հերթին հանդիսանում են վերանորոգման ծառայության բաղկացուցիչ մաս:

Բացի այդ, «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են նաև «Գույքի վերանաորոգման աշխատանքներ» և «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայության մատուցման» պայմանագրեր, որոնց համադրման արդյունքում գնահատող հանձնաժողովը «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը գնահատել է հրավերով նախատեսված պահանջներին համապատասխան»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին ժամանակացույցի մասին, սակայն չի ապահովել լիազորված որևէ ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/72 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է քաղաքացի Դավիթ Թովմասյանի կողմից 18.05.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 24.05.2018թ. թիվ ԴՎԱ/1862 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 03.04.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3, և 02.05.2017թ. ժամը 12:15-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կահույքի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Սեմանգ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

Հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի գնման առարկա է հանդիսանում «կահույքի վերանորոգման և պահպանման ծառայությունները (Գրասենյակային գույք և կահույք)», որի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել են հետևյալ աշխատանքների տեսակները.

Կահույքի վերանորոգման և պահպանման ծառայություններ (Գրասենյակային գույք և կահույք)

Հ/հ	Տեխնիկական բնութագիր	Չ/Մ	
1	Պողպատե 25*25*2,5մմ չափի անկյունակի փոխարինում	գծմ	
2	Պողպատե D_w=32*2,5մմ չափի խողովակի փոխարինում	գծմ	
3	Պողպատե D_w=25*2,5մմ չափի խողովակի փոխարինում	գծմ	
4	Պողպատե D_w=25*2մմ չափի խողովակի փոխարինում	գծմ	
5	Պողպատյա 2մմ հաստ. թիթեղի փոխարինում	$մ^2$	
6	Պողպատյա 3մմ հաստ. թիթեղի փոխարինում	$մ^2$	
7	Մետաղական պահարանի ներդրովի փականքի փոխարինում	հատ	
8	Անվակի փոխարինում /մետաղական պահարանի, Φ60մմ/	հատ	
9	Պողպատե կառուցամասերի արտաքին մակերևույթների մաքրում հին ներկից և ժանգից	$մ^2$	
10	Պողպատե կառուցամասերի արտաքին մակերևույթների ներկում 2 անգամ	$մ^2$	
11	Փայտի վրա երեսաքաշված ցինկապատ 0,3մմ հաստ. թիթեղի փոխարինում	$մ^2$	
12	Բրեզենտատիպ կտորի փոխարինում	$մ^2$	
13	Կտորի փոխարինում	$մ^2$	
14	Սպունգի փոխարինում, 1սմ հաստ. /խտությունը՝ 1քմ-ում 0,35կգ /	$մ^2$	
15	Սպունգի փոխարինում, 3սմ հաստ. /խտությունը՝ 1քմ-ում 1,05կգ /	$մ^2$	
16	Կահույքի նրբատախտակի 4մմ հաստ. փոխարինում	$մ^2$	
17	Կահույքի նրբատախտակի 10մմ հաստ. փոխարինում	$մ^2$	
18	Կահույքի նրբատախտակի 12մմ հաստ. փոխարինում	$մ^2$	
19	Կահույքի փայտատաշեղային 16մմ հաստ. սալի փոխարինում	$մ^2$	
20	Կահույքի փայտատաշեղային երկկողմանի լամինացված 18մմ հաստ. սալի փոխարինում	$մ^2$	
21	Կահույքի լամինացված 18մմ հաստ. ՄԴՖ սալի փոխարինում	$մ^2$	
22	Կահույքի ՄԴՖ-ի 30մմ հաստ. սալի փոխարինում	$մ^2$	
23	Փայտե դետալների փոխարինում	$մ^3$	
24	Փայտյա մակերևույթների բարելավված ներկում	$մ^2$	
25	Հեղույս, մանեկ/արժեքը /	կգ	
26	Պտուտակ/արժեքը /	կգ	
27	Ժապավեն ապակե թելից /արժեքը/	100մ	
28	Ծխնու փոխարինում	հատ	
29	Կահույքի սահուղու փոխարինում	հատ	
30	Կահույքի ծխնու փոխարինում	հատ	
31	Բռնակի փոխարինում	հատ	
32	Փայտե պատրաստվածքների ներդրովի փականքի փոխարինում	հատ	
33	Պլաստմասե տակդիր խցանի՝ հարթ կամ կցաշուրթով, փոխարինում	հատ	
34	ՄԴՖ-ից ձևավոր ոտնակի փոխարինում 5*5սմ, երկար. 70սմ չափի	հատ	
35	ՄԴՖ-ից ձևավոր ոտնակի փոխարինում 6*6սմ, երկար. 70սմ չափի	հատ	

Հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծի Հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով սահմանված՝ Կահույքի վերանորոգման և պահպանման ծառայություններ (Գրասենյակային գույք և կահույք) ծառայությունների գնման համար նախատեսված առավելագույն գումարը կազմում է 7,000,000 ՀՀ դրամ:

«Սեմանգ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 04.04.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի N3 արձանագրության 3.1 կետով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Սեմանգ» ՍՊԸ-ին, որի գնային առաջարկը 1-ին չափաբաժնի մասով կազմել է 400,020 ՀՀ դրամ (ներոյալ ԱԱՀ):

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրեր, «Սեմանգ» ՍՊԸ-ն հանձնաժողովին է ներկայացրել հետևյալ պայմանագրերը՝

- 06.06.2017թ. «Երևանի Ռ. Միրոյանի անվան N 77 դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքված «Գույքի վերանորոգման աշխատանքների» N 77-17/01 գնման պայմանագիրը (ծավալը գումարային արտահայտությամբ՝ 714,000 ՀՀ դրամ), ներկայացվել է նաև հանձնման-ընդունման արձանագրության պատճենը: Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված՝ աշակերտական սեղանների և աթոռների վերանորոգման աշխատանքները ներառում են հետևյալ աշխատանքները՝ հին ներկի մաքրում, նոր ներկով ներոգում, զոդման աշխատանքներ, նոր լամինատի տեղադրում, սեղանի հավաքում, ներկ և լուծիչ, նոր խցանների տեղադրում:
- 14.04.2015թ. «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի հետ կնքված «Ծառայությունների մատուցման» պայմանագիրը (ծավալը գումարային արտահայտությամբ՝ 3,870,000 ՀՀ դրամ), ներկայացվել է նաև ընդունող կողմի գրավոր հավաստումը:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրի առարկա է հանդիսանում թվով 4464 աթոռների և 2232 սեղանների համար պահանջվող երկաթի ծռելու և զոդելու ծառայությունները, իսկ նույն պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ կատարողը պարտավորվում է հաշվարկային փաստաթղթով ստանալ ապրանքներ Պատվիրատուից կամ նրա ներկայացուցչից, ինչպես նաև դրանք հաշվարկային փաստաթղթով հանձնել Պատվիրատուին կամ նրա ներկայացուցչին: Տեղեկացնել Պատվիրատուին ծառայության մատուցման ավարտի մասին, որից հետո Պատվիրատուն երկու օրվա ընթացքում պարտավոր է ծռված և զոդված երկաթը տեղափոխել փոշեներկման:

- 06.11.2017թ. «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքված «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայությունների մատուցման» N ՀՀ ԱՄԱՇ-

ՄԱԳՎԾՄ-17/05 պետական գնման պայմանագիրը (ծավալը գումարային արտահայտությամբ՝ 950,000 ՀՀ դրամ), ներկայացվել է նաև հանձնման-ընդունման արձանագրության պատճենը: Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված է դպրոցական գույքի վերանորոգում՝ /սեղան 2 աթոռով, ներսենյակային դռներ/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում

կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի նույն հրավերով սահմանված առավելագույն գնի քսան տոկոսից:

բ. նույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Նույն կետի համաձայն՝ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում գրասենյակային գույքի կամ կահույքի կամ զինվորական կամ հոսպիտալային մահճակալների նորոգման ծառայությունների մատուցված լինելը:

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ նախկինում կատարված պայմանագրերը, և արձանագրել, որ.

- 06.11.2017թ. «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքված «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայությունների մատուցման» N ՀՀ ԱՄԱԾ-ՄԱԳՎԾՄ-17/05 պետական գնման պայմանագրի և 06.11.2017թ. «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքված «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայությունների մատուցման» N ՀՀ ԱՄԱԾ-ՄԱԳՎԾՄ-17/05 պետական գնման պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված աշխատանքների համանման են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված աշխատանքներին:

- 14.04.2015թ. «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի հետ կնքված «Ծառայությունների մատուցման» Պայմանագրով նախատեսվել է ընդամենը աթոռների և սեղանների համար պահանջվող երկաթի ծռելու և զոդելու ծառայությունները, որի շրջանակներում կատարողը հաշվարկային փաստաթղթով ստացել է ապրանքներ Պատվիրատուից, այնուհետև, երկաթի ծռելու և զոդելու ծառայություններն ավարտելուց հետո, հաշվարկային փաստաթղթով հանձնել է Պատվիրատուին, որն էլ ծռված և զոդված երկաթը տեղափոխել է փոշեներկման: Այսինքն, ըստ էության, նշված պայմանագրով համանման համարվող կահույքի վերանորոգման ծառայություններ նախատեսված չեն եղել և չեն մատուցվել:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:
- 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին

համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով սահմանված՝ Կահույքի վերանորոգման և պահպանման ծառայություններ (Գրասենյակային գույք և կահույք) ծառայությունների գնման համար նախատեսված առավելագույն գումարը կազմում է 7,000,000 ՀՀ դրամ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ նախկինում կատարված 06.11.2017թ. «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքված «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայությունների մատուցման» N ՀՀ ԱՄԱԾ-ՄԱԳՎԾՄ-17/05 պետական գնման պայմանագիրը և 06.11.2017թ. «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքված «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայությունների մատուցման» N ՀՀ ԱՄԱԾ-ՄԱԳՎԾՄ-17/05 պետական գնման պայմանագիրը չեն հանդիսանում նմանատիպ պայմանագրեր, քանի որ դրանց շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս է Ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, և դրանցից յուրաքանչյուրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Ուստի, Հանձնաժողովը՝ «Սեմանգ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, 6-րդ մասով, Կարգի 61-րդ, 63-րդ կետերով, ինչպես նաև Հրավերի 2.5 կետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է 14.04.2015թ. «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի հետ կնքված «Ծառայությունների մատուցման» Պայմանագրին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված պայմանագրի շրջանակներում համանման համարվող կահույքի վերանորոգման ծառայություններ նախատեսված չեն եղել և չեն մատուցվել, ուստի տվյալ պայմանագիրը ևս

չի կարող գնահատվել որպես նախկինում կատարված համանման (նմանատիպ) պայմանագիր:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քաղաքացի Դավիթ Թովմասյանի կողմից 18.05.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Սեմանգ» ՍՊԸ-ին՝ թիվ 4 արձանագրությամբ հաղթող մասնակից ճանաչելու որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ